ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

«___21____» _____մայիսի_____ 2024 թ. № _614__ - Լ

ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2025թ. հունվարի 21 -ի N70 - Լ հրամանի խմբագրությամբ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՐՏԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի կիրառությունն ապահովելու նպատակով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2024թ. մայիսի 21 -ի N614 - Լ հրամանի

Ձև

ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՐՏԻ

____ _____ 20____ թվականի դրությամբ _____ -ի՝

(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, ՀՎՀՀ, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման (հաշվառման կամ նշանակման) ամսաթիվը)

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավելի վճարված գումարները, միասնական և վարչական ակտի միասնական հաշվում առկա գումարները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են՝

դրամ

Հարկը/վճարը	Հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներով				Հարկային մարմնի կազմած վարչական ակտով			Ընդամենը			Պարտա-վորության չափը (ընդամենը)
	հարկի կամ վճարի չափը		տույժը	տուգանքը	հարկի կամ վճարի չափը	տույժը	տուգանքը	հարկի կամ վճարի չափը	տույժը	տուգանքը	
	ոչ ժամկետանց	ժամկետանց									
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)											
Ներմուծման ԱԱՀ											
Ակցիզային հարկ											
Ներմուծման ակցիզային հարկ											
Շրջանառության հարկ											
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար											
Ներմուծման բնապահպանական հարկ											
Ռեզիդենտի շահութահարկ											
Ոչ ռեզիդենտի շահութահարկ											
Տրանսֆերային շահութահարկ											
Տրանսֆերային ռոյալթի											
Սոցիալական վճար (ամսական)											
Սոցիալական վճար (տարեկան)											

Եկամտային հարկ											
Դրոշմանիշային վճար											
Ռոյալթի											
Պետական տուրք											
Պետական տուրք (19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված)											
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար											
Ճանապարհային հարկ											
Արտոնագրային հարկ											
Հաստատագրված վճար											
Պարզեցված հարկ											
Եկամտահարկ											
Պարտադիր սոցիալական ապահովության վճար											
Տուգանքներ և վնասի հատուցման գումար											
Ընդամենը											

Դեբետային մնացորդ		Փոխհատուցվող գումարի մնացորդ	Սահմանված չափից ավելի վճարված գումարներ				Միասնական հաշվում առկա գումար	Վարչական ակտի միասնական հաշվում առկա գումար
ԱԱՀ	ակցիզային հարկ		սոցիալական վճար (հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած)	դրոշմանիշային վճար	պետական տուրք	պետական տուրք (19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված)		

Ծանոթագրություն

Սույն քաղվածքը կազմված է կազմման օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա, որը կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ ի հայտ գալու դեպքում:

«Փոխհատուցվող գումարի մնացորդ» սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական բյուջեից փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարի կամ օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ռոյալթիի գումարի կամ օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան սոցիալական ծախսերի արդյունքում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա եկամտային հարկի գումարի մնացորդը: